ԿԱՐԾԻՔ

Քրիստինա Արսենի Խառատյանի «Լոգոպեդական վաղ միջամտության մոդելը աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում» ԺԳ.00.03 «Հատուկ մանկավարժություն» (Լոգոպեդիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող գիտական աշխատանքը նվիրված է լոգոպեդիայի տեսության և պրակտիկայի կարևոր, արդիական հիմնախնդրին՝ լոգոպեդական վաղ միջամտության մոդելի մշակմանը աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում: Հեղինակն ընտրել է այդ խնդրի լուծման գրեթե չհետազոտվող ուղղություն՝ այդ երեխաների հետ իրականացվող աշխատանքում կիրառվող լոգոպեդական վաղ միջամտության մոդելի մշակմամբ:

Հետազոտության հիմնախնդրի արդիականությունը որոշվում է նաև նրանով, որ կիրառվող լոգոպեդական մոտեցումները աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող վաղ միջամտության աշխատանքներում հաճախ լինում են ոչ արդյունավետ: Գործնականում կիրառվող լոգոպեդական միջոցները և մեթոդները հիմնականում իրականացվում են այդ մասնագետների ունեցած անհատական գիտելիքների և փորձի, ոչ փորձարարական մշակված մոտեցումների հիման վրա:

Այս համատեքստում լոգոպեդական վաղ միջամտության մոդելի մշակումը աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում և դրա արդյունավետության փորձարարական հիմնավորումը հանդիսանում է արդիական, տարբերվում է նորույթով, տեսական և գործնական կարևորությամբ:

Հայտնի է, որ աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների հետ իրականացվող հոգեբանամանկավարժական աշխատանքում գործածվող լոգոպեդական վաղ միջամտության ժամանակակից մեթոդների և միջոցների առանձին կիրառումը որոշակիորեն խթանում է երեխայի զարգացմանը, սակայն պետք է շեշտադրել այս մեթոդների համակարգային մշակման անհրաժեշտությունը՝ ի նպաստ աուտիզմ ունեցող երեխաների բազմակողմանի զարգացման և լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառմամբ վերոնշյալ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Թե՛ մասնագիտական վերլուծության, և թե՛ գրախոսվող ատենախոսական աշխատանքում ներկայացված հետազոտությունների արդյունքները փաստում են, որ նույնիսկ վաղ կազմակերպված լոգոպեդական աշխատանքը համապատասխան արդյունավետություն չի ապահովում, քանզի հաճախ, այս գործընթացում հաշվի չեն առնվում երեխայի զարգացման անհատական առանձնահատկություններն ու

առաջադրվող մանկավարժական պայմանները: Ձևավորված հակասության հաղթահարման անհրաժեշտությամբ են նաև պայմանավորված հեղինակի ուսումնասիրությունները: Աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների արդյունավետ լոգոպեդական վաղ միջամտության կազմակերպման համար անհրաժեշտ է աշխատանքը սկսել 0-3 տարեկան հասակում, երեխաների նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում և կիրառել աուտիզմի համախտանիշի հաղթահարման վաղ միջամտության համակարգային մոդել:

Հայաստանում աուտիզմի համախտանիշի հաղթահարման, մասնավորապես աուտիզմի սպեկտրի խանգարման լոգոպեդական գործընթացում, շատ քիչ են գործածվում մեթոդական և նեղ մասնագիտական համալիր միջամտության մոտեցումներ ու մոդելներ, որոնցում լոգոպեդական աշխատանքի դերը առանձնակի կարևորություն կարող է ունենալ: Սակայն, լոգոպեդական վաղ միջամտության այսպիսի մոդելները խիստ սակավաթիվ են, ինչով և պայմանավորված է քննարկվող հետազոտության առանձնակի կարևորությունը:

Անհրաժեշտ է հատուկ նշել, որ աշխատանքում հեղինակը վեր է հանում ոլորտում առկա մի շարք թերություններ, որոնցից են՝ լոգոպեդների շրջանում հաստատագրված մեթոդների սահմանափակ կիրառությունը, մեթոդական համալիր կիրառության բացակայությունը, որոշ մասնագետների կողմից խնդրո առարկայի վերաբերյալ ոչ լիարժեք տեղեկացվածությունը, վաղ ախտորոշման, ապա՝ վաղ միջամտության կազմակերպման դժվարությունները և, ինչպես վերը նշվեց, ծնողների ներգրավվածության պակասը կամ գրեթե բացակայությունը իրականացվող լոգոպեդական աշխատանքներում: Փաստորեն աշխատանքներն հիմնականում կազմակերպվում են թիմերից անկախ՝ միայն անհատական լոգոպեդական պարապմունքների ձևով ՝ առանց ծնողի ներկայության, շեշտը դրվում է առանձին բառերի արտաբերման վրա, իսկ հաղորդակցման միջոցների ձևավորմանն ուղղված աշխատանքներն ու դրանց ամրապնդումը մնում են ստվերում: Սրանք սկզբունքային և հրատապ լուծում պահանջող հարցեր են և որոնց կարգավորումը հեղինակի առաջարկված մոդելի կիրառմամբ զգալիորեն կնպաստի ոլորտի զարգացմանը:

Վերը նշված խնդիրները հիմք են հանդիսացել հեղինակի կողմից առաջադրվող մոդելի, այն է՝ աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների լոգոպեդական վաղ միջամտությանն ուղղված միջոցների, մանկավարժական պայմանների առաջադրմանը, այդ գործընթացում ներգրավված անձանց՝ մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների

և ծնողների մասնակցության միջոցներով իրականացվող համալիր մեթոդական համակարգի կիրառմանը, որը ենթադրում է.

- Վաղ միջամտության կազմակերպում
- Համալիր մեթոդական միջամտություն՝ թիմային աշխատանքին զուգահեռ
- Ծնողավարություն:

Աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների շրջանում հաղորդակցման տարբեր մակարդակի խանգարումների խնդիրը հանդիսանում է լոգոպեդիայի և հատուկ մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկը, ուստի Քրիստինա Խառատյանի աշխատանքը հետաքրքրություն է ներկայացնում մասնագետների լայն շրջանների՝ բժիշկների, ֆիզիոլոգների, հոգեբանների և, իհարկե, մանկավարժների համար:

Աշխատանքն ունի նաև կարևոր սոցիալական նշանակություն, քանի որ ուղղված է խնդիրները հատուցելու հատուկ հմտություններ և նոր մոտեցումներ մշակելուն, ինչը կարևոր է նման անձանց սոցիալական ռեհաբիլիտացիայի համար և ցանկացած գիտական հետազոտությունը, որն ուղղված է այդ թերությունը հաղթահարելու ուղիների բացահայտմանը հանդիսանում է հույժ արդիական:

Հետազոտության նպատակն է՝ մշակել աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության՝ խոսքի և հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված համակարգային մոդել:

Հեղինակի կողմից խնդիր է դրված մշակել և հստակեցնել աուտիզմի համախտանիշի դրսևորումների հաղթահարման լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառմամբ, այն է՝ երեխաների կապակցված խոսքի զարգացմանն ուղղված մանկավարժական մեթոդներ, առաջարկելով՝ գործողությունների պարզ և արդյունավետ միջոցներ:

Այս համատեքստում Քրիստինա Խառատյանի կողմից մշակված լոգոպեդական վաղ միջամտության գործընթացում կիրառվել են աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման գնահատման, վաղ միջամտության մեթոդների և մոտեցումների համակարգման առավել արդյունավետ ուղիներ, ներկայացվել է լոգոպեդական վաղ միջամտության հաստատված մեթոդների ու միջոցների համակարգային և կիրառական մոդել, որն իր հերթին ներառում է աուտիզմի սպեկտրի խանգարումների հաղթահարման համալիր ծրագիր:

Մեր կարծիքով, լոգոպեդական վաղ միջամտության նման մոդելի կիրառումը թույլ կտա համակարգել աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների սոցիալական հարմարվողականության զարգացումը, աջակցել իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության գործընթացի կազմակերպմանը՝ ներգրավելով նրանց սոցիալական միջավայր, ընդլայնելով նրանց սոցիալական շփումը և զարգացնելով երեխաների էքսպրեսիվ բանավոր խոսքը:

Կատարված է լայնածավալ հետազոտություն, որտեղ օգտագործվել են բազմապիսի և ժամանակակից մեթոդներ՝ դիտում, զրույց, հարցում, հարցաթերթիկ, փորձարարական ուսուցում, հետազոտվողների բժշկական փաստաթղթերի ուսումնասիրություն, կիրառվել են հետազոտման՝ հաստատող և ձևավորող փորձարարական մեթոդներ՝ ստուգողական փորձարկումներ, թեստավորում, ինչպես նաև՝ մաթեմատիկական վիճակագրական մեթոդներ: Անհրաժեշտ է փաստել նաև, որ հեղինակի կողմից կիրառվել են ժամանակակից մանկավարժական և կլինիկաֆիզիոլոգիական հետազոտության և միջամտության մեթոդներ և նրան հաջողվել է հասնել խնդրի լուծմանը:

Կիրառվել և գնահատական են ստացել ժամանակակից լոգոպեդիայում գործնական նշանակություն ունեցող մի շարք ժամանակակից մեթոդներ՝

- ABA Վարքի շտկում
- «ԱՖֆոլտերի» մեթոդ
- Զգայական ինտեգրացիա
- Ժեստային խոսքի (AAC) մեթոդը
- «PECS» մեթոդը
- «Տեսողական աջակցության» մեթոդը
- «Հասակակիցների հետ ադապտացման» մեթոդը
- Խաղային թերապիա:

Հատկանշական է, որ Քրիստինա Խառատյանի կողմից ուսումնասիրվել է աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների լոգոպեդական վաղ միջամտության աշխատանքների դրվածքը վերականգնողական և կրթական տարբեր հաստատություններում, մասնավորապես՝ «ԱրԲեՍ» առողջության կենտրոնում, բացահայտվել է ոլորտի մասնագետների, ուսանողների, ծնողների տեղեկացվածության մակարդակը ԱՍԽ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական վաղ միջամտության աշխատանքների իրականացման պայմաններում և սահմանվել են այս համակարգի երեխաների լոգոպեդական վաղ միջամտության կազմակերպման հիմնական ուղղությունները, բնույթը,

բովանդակությունը և մշակվել է աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության՝ խոսքի և հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված համակարգային մոդել, որը ներառում է աուտիզմի սպեկտրի խանգարումների հաղթահարման համալիր ծրագիր:

Իրականացված հետազոտությունների արդյունքներով հեղինակը հիմնավորում է, որ լոգոպեդական աշխատանքի վաղ միջամտության առաջադրած մոդելը բաղկացած է իրար հաջորդող քայլերից՝

- Լոգոպեդական հետազոտություն և առաջնային գնահատման փուլ:
- Լոգոպեդական բուն ներազդեցություն և միջանկյալ գնահատման փուլ:
- Ամփոփիչ/վերջնական գնահատման փուլ:

Մասնագիտացված հաստատություններում հեղինակի կողմից իրականացված ուսումնավերականգնողական աշխատանքների արդյունավետության բարձրացման մանկավարժական դիտումները և լոգոպեդական գնահատումները հնարավորություն են ստեղծում համակարգելու աուտիզմի սպեկտրի խանգարումների հաղթահարման համալիր ծրագիրը, լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառումը նպաստում է աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների ներգրավմանը սոցիալական միջավայր՝ ընդլայնելով նրանց սոցիալական շփումը, իսկ մանկավարժական որոշակի պայմանների առաջադրումը հնարավորություն է ստեղծում ընդլայնել երեխայի հաղորդակցական հնարավորությունները:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորումը շեշտադրված է տարբեր բնագավառների գիտական նվաճումների վրա հիմնված մեթոդոլոգիական մոտեցմամբ, հետազոտության խնդիրների և ուսումնասիրվող դրույթների բնույթին համապատասխան համակարգային մեթոդների կիառմամբ, վիճակագրական ժամանակակից մեթոդների կիրառմամբ (Բաց հասարակության հիմանդրամներ՝ հայաստանյան գրասենյակի «Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների» կենտրոնի 2019թ. և ՅՈՒՆԻՍԵՖ՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ 2020թ.), հետազոտվողների բավարար քանակակազմով, անցկացված աշխատանքի ծավալով, հետազոտության ժամանակակից և համապատասխան մեթոդների կիրառմամբ, փաստացի փորձարարական նյութերի վիճակագրական մշակմամբ, ստացված որակական և քանակական արդյունքների ներդրմամբ:

Հեղինակի կողմից կատարված է գիտական գրական աղբյուրների խորը և քննադատական վերլուծություն՝ վերհանելով մինչ օրս այս ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների ընթացքը և հակասությունները:

Ատենախոսությունը կառուցված է ավանդական ձևով և բաղկացած է թեկնածուական ատենախոսության համար նախատեսված հիմնական բաժիններից: Ատենախոսության նյութերից կարող են օգտվել մանկավարժական բուհերի, նախադպրոցական, տարրական և հատուկ կրթության ֆակուլտետների դասախոսները, լոգոպեդները, հոգեբանները, մանկաբույժները:

Ամբողջությամբ դրական գնահատելով Ք.Ա.Խառատյանի ատենախոսական աշխատանքը՝ անհրաժեշտ ենք համարում նշել պարզաբանման կարիք ունեցող հետևյալ դիտարկումները, որոնք առանձնացված են մեր կողմից՝

1. Հետազոտությունն ավելի ամբողջական կլիներ, եթե հիմնախնդրի դրվածքի վերլուծությունում ավելի մանրամասն ներկայացվեր երեխայի անձի ձևավորման տեսությունը հաղորդակցման գործընթացում, աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների հաղորդակցման միջոցների ձևավորման ուղղությունները և աուտիզմի հիմնախնդրի հոգեբանական վերլուծության տեսությունը:
2. Ատենախոսական աշխատանքն ավելի կշահեր, եթե մշակված մոդելի շրջանակներում արտահայտված լինեին անհատական և խմբային պարապմունքների առանձնահատկությունները, դրանց կարևորությունը և կիրառելիությունը:
3. Ծնողների և մասնագետների համար առաջարկված ցուցումները հավելվածում կարելի էր ներկայացնել առանձին, քանի որ նրանց առանձին ներգրավվումը աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաներին տրամադրվող մասնագիտական միջամտության պայմաններում բարձրացնում է աշխատանքի արդյունավետությունը՝ նպաստելով վերջինիս արագ տեմպերին և համապարփակությանը:
4. Զգալի ընդլայնում և ճշգրտում է պահանջում ատենախոսության եզրակացությունը, հատկապես՝ 2-րդ, 3-րդ, 5-րդ կետերը:
5. Աշխատանքում կան առանձին մտքերի կրկնություններ, տպագրական սխալներ՝ գլուխ 2-րդ, 3-րդ, էջեր՝ 56, 98, 115 և այլն:

Վերոնշյալ դիտողությունները չեն ազդում հետազոտության գիտական ուղղվածության վրա:

Հայտնում եմ ատենախոսության վերաբերյալ իմ դրական կարծիքը և կատարված աշխատանքի բարձր գնահատականը:

Գիտական հրապարակումներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Այսպիսով, անցկացված վերլուծությունը վկայում է, որ ատենախոսությունն իր բովանդակությամբ ներկայացնում է մանկավարժական հետազոտություն: Հայցորդի ստացած գիտական և գործնական արդյունքները կարելի է դասակարգել որպես արդիական գիտական խնդրի նոր լուծում:

Վերը նշվածը թույլ է տալիս կատարել ընդհանուր եզրակացություն առ այն, որ հետազոտության արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը հիմք են տալիս համարել, որ Քրիստինա Արսենի Խառատյանի «Լոգոպեդական վաղ միջամտության մոդելը աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում» մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, տարբերվում է իր նորույթով, տեսական, գործնական և սոցիալական նշանակությամբ, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր՝ ԺԳ.00.03 «Հատուկ մանկավարժություն» (Լոգոպեդիա) մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսը լիովին արժանի է գիտական աստիճանի հայցման:

Պաշտոնական ընդդիմախոս՝
մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ **Ռ.Ն. ԱԶԱՐՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոս՝
մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Ռ.Ն. Ազարյան՝ ստորագրությունը հաստատում եմ

Գիտական քարտուղար՝
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ **Մ.Մ. ԻՍՊԻՐՅԱՆ**

14.04.2023 թ.